https://doi.org/10.53587/25792865-2026.15-59

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Թումանյան Կ.Հ.

Բարձրագույն դատական խորհուրդ,
Երևան, Հայաստան

Սույն հոդվածը նվիրված է տեղական ինքնակառավարման մակարդակում շրջակա միջավայրիիրավունքների հայեցակարգի ինստիտուցիոնալացման կառուցակարգային-իրավական ասպեկտների վերլուծությանը: Հատուկ ուշադրություն է դարձվում տեղական ինքնակառավարման մարմինների դերին էկոլոգիական կողմնորոշվածությանը կառավարման ապահովման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետական պարտավորությունների կատարման գործում՝ ժամանակակից միջազգային-իրավական միտումների և էկոլոգիական իրավական դոկտրինների զարգացման համատեքստում:

Հոդվածում վեր է հանվում Հայաստանի Հանրապետությունում առկա հակասությունը բնապահպանական լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների և դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական, կազմակերպչական ու կադրային ռեսուրսների կենտրոնացման միջև: Հիմնավորվում է, որ նման հաշվեկշռությունը հանգեցնում է ինստիտուցիոնալ դեֆիցիտի ձևավորմանը, ինչը սահմանափակում է տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունները բնակչության էկոլոգիական շահերի ապահովման, բնական էկոհամակարգերի պահպանման և կայուն զարգացման նպատակների նվաճման գործում:

Այս համատեքստում առաջարկվում է սուբսիդիարության սկզբունքի վերաիմաստավորում՝ որպես էկոլոգիական լիազորությունների բաշխման և բնապահպանական ոլորտում պետական պարտավորությունների իրականացման ֆունկցիոնալ հիմք: Ձևակերպվում է «ֆունկցիոնալ սուբսիդիարության» հայեցակարգը, որը ենթադրում է անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածության և կազմակերպչական հնարավորությունների առկայություն՝ փոխանցվող լիազորությունների իրականացման համար: Դիտարկվում է տվյալ մոտեցման ներուժը էկոլոգիապես նշանակալի որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության մեխանիզմների ամրապնդման, տեղական էկոլոգիական կառավարման արդյունավետության բարձրացման և բնության իրավունքների

Թղթակցական հասցեն՝ Թումանյան Կարեն Հովհաննեսի, *Բարձրագույն դատական խորհուրդի անդամ,* +374 93 342900, email: kartumanyan@yahoo.com

հայեցակարգի ինստիտուցիոնալացման իրավական երաշխիքների ձևավորման համար:

Բանալի բառեր. *շրջակա միջավայրի իրավունքների հայեցակարգ, ինստիտուցիոնալացում, սուբսիդիարության սկզբունք, ֆունկցիոնալ սուբսիդիարություն, տեղական ինքնակառավարում, էկոլոգիական կառավարում, ապակենտրոնացում, Օրհուսյան կոնվենցիա, հանրային մասնակցություն:*

Ներածություն

Շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ իրացման հիմնահարցը ժամանակակից սահմանադրական և վարչական իրավունքի կենտրոնական թեմաներից մեկն է, որի նշանակությունը պայմանավորված է ոչ միայն բնապահպանական ռիսկերի աճով, այլև մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության նոր չափորոշիչների ձևավորմամբ:

Միաժամանակ, միջազգային և եվրոպական իրավական զարգացումները, մասնավորապես՝ սուբսիդիարության սկզբունքի ամրապնդումը և Օրհուսի կոնվենցիայի մեխանիզմների ներդրումը, պայմանավորել են շրջակա միջավայրի կառավարման ապակենտրոնացման միտումը՝ փոխանցելով էական դերակատարում տեղական ինքնակառավարման մարմիններին: Այս մոտեցումը հիմնված է այն կանխադրույթի վրա, որ բնապահպանական խնդիրները առավել արդյունավետ կարող են լուծվել այն մակարդակում, որտեղ դրանք անմիջականորեն դրսևորվում են:

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության իրավական և ինստիտուցիոնալ համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ ձևավորված է կառուցվածքային հակասություն, որն ունի տեսական և կիրառական նշանակություն. մի կողմից՝ բնապահպանական պարտավորությունները ապակենտրոնացվում են և վերապահվում տեղական ինքնակառավարման մարմիններին, մյուս կողմից՝ դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական, մասնագիտական և վերահսկողական ռեսուրսները շարունակում են կենտրոնացված մնալ պետական մակարդակում:

Գիտական խնդրի էությունն այն է, որ գործող իրավակարգում բացակայում է լիազորությունների բաշխման, ինստիտուցիոնալ կարողությունների և պատասխանատվության մեխանիզմների համակարգային համադրությունը, ինչի հետևանքով շրջակա միջավայրի իրավունքը, թեև նորմատիվորեն ամրագրված, չի ստանում լիարժեք գործնական իրացում: Այս իրավիճակը պահանջում է ոչ միայն առկա կարգավորումների նկարագրություն, այլև դրանց կառուցվածքային վերլուծություն՝ հաշվի առնելով միջազգային փորձը և մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

Այսպիսով, հոդվածը նպատակ ունի ոչ միայն նկարագրել գործող համակարգը, այլև բացահայտել դրա ներքին հակասությունները և առաջարկել դրանց

հաղթահարման տեսական և գործնական ուղղություններ՝ նպաստելով շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ իրացմանը Հայաստանի Հանրապետությունում:

Շրջակա միջավայրի պահպանության ապակենտրոնացման տեսական հիմքերը

Ժամանակակից իրավական և ինստիտուցիոնալ զարգացումները ցույց են տալիս, որ շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ իրացումը պայմանավորված է ոչ միայն նորմատիվ կարգավորման մակարդակով, այլև այդ նորմերի գործնական կիրառման ինստիտուցիոնալ կազմակերպմամբ, որի առանցքային օղակն են տեղական ինքնակառավարման մարմինները [1,2]:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում սուբսիդիարության սկզբունքը, ինչը ենթադրում է, որ որոշումների կայացումը և դրանց իրականացումը պետք է կազմակերպվեն հնարավորինս տեղական մակարդակում՝ ապահովելով կառավարման արդյունավետությունը և հանրության մասնակցությունը:

Կարևոր նշանակություն ունի սուբսիդիարության սկզբունքը, որը դասական իրավական դոկտրինում հիմնականում մեկնաբանվում է որպես լիազորությունների բաշխման և կառավարման մակարդակների միջև հարաբերությունների կարգավորման մեխանիզմ: Սակայն շրջակա միջավայրի իրավունքի զարգացման համատեքստում նման մոտեցումը չի արտացոլում այդ սկզբունքի ամբողջական գործառույթ: Սույն հետազոտությունը առաջարկում է սուբսիդիարության սկզբունքի դոկտրինալ վերաիմաստավորում՝ այն դիտարկելով պետության պարտավորությունների իրականացման գործառնական հարթությունում [3,4,5]:

Այս համատեքստում հիմնավորվում է, որ՝ բնապահպանական ոլորտում սուբսիդիարության սկզբունքը պետք է մեկնաբանվի ոչ միայն որպես լիազորությունների բաշխման տեխնիկական մեխանիզմ, այլ որպես պետության պոզիտիվ պարտավորությունների իրականացման ինստիտուցիոնալ մակարդակ, որտեղ տեղական ինքնակառավարման մարմինները հանդես են գալիս որպես այդ պարտավորությունների անմիջական կրողներ և իրականացնողներ: Արդյունքում ձևավորվում է տեսական նոր կոնցեպտ՝ «ֆունկցիոնալ սուբսիդիարություն»: Շրջակա միջավայրի կառավարման ոլորտում դա նշանակում է, որ բնապահպանական լիազորությունները բաշխվում են տեղական, ազգային և, անհրաժեշտության դեպքում, վերազգային մակարդակների միջև՝ ապահովելով այն սկզբունքը, որ յուրաքանչյուր մակարդակ պետք է իրականացնի այն գործառույթները, որոնք առավել արդյունավետ են տվյալ մակարդակում՝ հատկապես հաշվի առնելով բնապահպանական խնդիրների տարածական, էկոլոգիական և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները [2]:

Այս տեսանկյունից, տեղական ինքնակառավարման մարմինները հանդես են գալիս ոչ թե որպես ապակենտրոնացված վարչական օղակներ, այլ որպես մարդու իրավունքների իրականացման առաջնային ինստիտուցիոնալ կրողներ՝ բնապահպանական ոլորտում:

Սուբսիդիարության սկզբունքը ժամանակակից հանրային կառավարման և իրավական համակարգերի առանցքային հիմնասյուներից մեկն է, որի էությունը կայանում է նրանում, որ հանրային իշխանության գործառույթները պետք է իրականացվեն այն մակարդակում, որն առավել մոտ է մարդուն և ունակ է առավել արդյունավետ կերպով արձագանքել տվյալ խնդիրներին: Այս սկզբունքը ամրագրված է 1985 թվականի Եվրոպական տեղական ինքնակառավարման խարտիայում, որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2002 թվականին և ունի ուղենշային նշանակություն տեղական ինքնակառավարման զարգացման և ապակենտրոնացման գործընթացների համար [1]:

Տեսական առումով սուբսիդիարության սկզբունքը ձևավորվել է որպես կենտրոնացման և ապակենտրոնացման միջև հավասարակշռություն ապահովող մեխանիզմ: Այն հիմնված է այն գաղափարի վրա, որ պետական կառավարման արդյունավետությունը բարձրանում է, երբ որոշումների կայացումը կատարվում է առավել ցածր՝ տեղական մակարդակում, բացառությամբ այն դեպքերի, երբ խնդրի բնույթը պահանջում է կենտրոնացված միջամտություն [2, 5]:

Բնապահպանական իրավունքի ոլորտում սուբսիդիարության սկզբունքը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն՝ պայմանավորված շրջակա միջավայրի խնդիրների երկակի բնույթով. մի կողմից՝ բնապահպանական ռիսկերը հաճախ ունեն տեղային դրսևորում, ինչը պահանջում է տեղական մակարդակում արագ և հասցեական արձագանք, մյուս կողմից՝ այդ խնդիրները կարող են ունենալ տրանսսահմանային ազդեցություն, ինչը ենթադրում է պետական և միջազգային մակարդակներում համագործակցություն:

Այս դոկտրինալ մոտեցումը հստակ արտահայտվել է մի շարք հիմնարար գործերով, մասնավորապես՝ Լոպես Օստրա ընդդեմ Իսպանիայի (Lopez Ostra v. Spain) և Ֆադեևա ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v. Russia) գործերով, որոնցում Դատարանը արձանագրել է պետության պարտականությունը՝ կանխելու և նվազեցնելու շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունները, անգամ այն դեպքերում, երբ այդ ազդեցությունները չեն հասնում անմիջական և ծանր առողջական վնասի շեմին: [6, 7]

Նույն տրամաբանության շրջանակում Գուերռա և այլք ընդդեմ Իտալիայի (Guerra and Others v. Italy) գործով ամրագրվել է շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովման պարտավորությունը՝ որպես անձնական կյանքի պաշտպանության բաղադրիչ, իսկ Հաթոն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and Others v. the United Kingdom) և Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain) գործերով զարգացվել է տնտեսական շահերի և անհատական իրավունքների միջև արդար հավասարակշռության ապահովման չափորոշիչը [8, 9, 10]:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հաստատում է, նաև որ շրջակա միջավայրի ոլորտում պետության պոզիտիվ պարտավորությունները առավել հստակ դրսևորվում են տեղային բնույթի վտանգների պայմաններում: Մասնավորապես, Դուբեցկա և այլք ընդդեմ Ուկրաինայի (*Dubetska and Others v. Ukraine*, 2011) գործով Դատարանը արձանագրել է պետության պարտականությունը՝ ապահովելու արդյունաբերական աղտոտման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն կոնկրետ համայնքներում, իսկ Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի (*Öneryildiz v. Turkey*, 2004) գործով՝ հաստատել է կանխատեսելի վտանգների կանխարգելման պարտադիր բնույթը՝ ընդգծելով նաև տեղական մակարդակում գործող մարմինների դերակատարությունը [11, 12]:

Դատարանի նախադեպային իրավունքը կառուցված է պետության միասնական պատասխանատվության սկզբունքի վրա, որի համաձայն՝ պետությունը կրում է ամբողջական պատասխանատվություն իր իրավազորության ներքո գործող բոլոր մարմինների գործունեության համար՝ անկախ կառավարման մակարդակից: Սակայն այս սկզբունքից բխում է կարևոր դոկտրինալ հետևություն. շրջակա միջավայրի ոլորտում պոզիտիվ պարտավորությունների արդյունավետ իրականացումը չի սահմանափակվում կենտրոնական մակարդակի նորմատիվ կարգավորմամբ, այլ անխուսափելիորեն պահանջում է դրանց գործնական իրականացում այն ինստիտուցիոնալ հարթությունում, որտեղ ձևավորվում և դրսևորվում են բնապահպանական ռիսկերը:

Հաշվի առնելով, որ շրջակա միջավայրի հետ կապված վտանգները և իրավախախտումները առավել հաճախ ծագում են տեղական սոցիալ-տարածքային միջավայրում՝ համայնքների շրջանակում, կարելի է եզրակացնել, որ պետության պոզիտիվ պարտավորությունների արդյունավետ իրականացումը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարության ինստիտուցիոնալ ուժեղացմամբ: Այս առումով տեղական ինքնակառավարման մարմինները հանդես են գալիս ոչ միայն որպես վարչական իրականացնողներ, այլ որպես պետության պոզիտիվ պարտավորությունների գործառնական կրողներ, որոնց միջոցով է ապահովվում շրջակա միջավայրի իրավունքի անմիջական և արդյունավետ իրականացումը:

Այս մոտեցումը նաև հիմնավորում է կանխարգելիչ (preventive) կառավարման մոդելի առաջնահերթությունը շրջակա միջավայրի ոլորտում: Իրավական պաշտպանության արդյունավետությունը պայմանավորված է ոչ թե արդեն առաջացած վնասի հետագա վերացման մեխանիզմներով, այլ նախնական փուլում ռիսկերի հայտնաբերման, գնահատման և կանխման կարողությամբ, ինչը առավելապես իրականացվում է տեղական մակարդակում: Հետևաբար, պետության պարտականությունը պետք է ներառի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների, ինստիտուցիոնալ կարողությունների, ֆինանսական և

մասնագիտական ռեսուրսների համալիր զարգացումը՝ որպես պոզիտիվ պարտավորությունների կատարման անհրաժեշտ նախապայման:

Այսպիսով, շրջակա միջավայրի իրավունքի դոկտրինալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սուբսիդիարության սկզբունքը բնապահպանական ոլորտում պետք է մեկնաբանվի ոչ միայն որպես լիազորությունների բաշխման մեխանիզմ, այլ որպես պետության պոզիտիվ պարտավորությունների իրականացման գործառնական կառուցվածք, որտեղ տեղական ինքնակառավարման մարմինները հանդիսանում են այդ պարտավորությունների առաջնային ինստիտուցիոնալ կրողները [3, 4, 5]:

Միևնույն ժամանակ, սուբսիդիարության սկզբունքի արդյունավետ իրականացումը պահանջում է մի շարք նախապայմաններ. 1) տեղական ինքնակառավարման մարմինների բավարար լիազորություններ, 2) ֆինանսական ինքնուրույնություն, 3) մասնագիտական կարողություններ, 4) վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմներ [1]:

Հայաստանի Հանրապետությունում սուբսիդիարության սկզբունքի իրացումը բնապահպանական ոլորտում դեռևս ունի զարգացման ներուժ: Չնայած օրենսդրական մակարդակում առկա են համապատասխան դրույթներ, գործնականում հաճախ նկատվում է կենտրոնացման գերակայություն և տեղական մակարդակում կարողությունների սահմանափակում [13, 14]: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրոպական միության համատեղ նախաձեռնության զեկույցները նույնպես փաստում են, որ բնապահպանական համապատասխանության ապահովման համակարգը Հայաստանում դեռևս ունի կառուցվածքային բարեփոխումների կարիք [15]:

Ամփոփելով՝ հարկ է ընդգծել, սուբսիդիարության սկզբունքը հանդիսանում է բնապահպանական կառավարման ապակենտրոնացման տեսական և իրավական հիմք, որը թույլ է տալիս համադրել տեղական ինքնավարությունը և պետական քաղաքականության միասնականությունը Միջազգային փորձը և դատական պրակտիկան ցույց են տալիս, որ այս սկզբունքի արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն բազմամակարդակ կառավարման համակարգի, ինստիտուցիոնալ կարողությունների և իրավական հստակության ապահովման պայմաններում:

Շրջակա միջավայրի պահպանության ապակենտրոնացման խնդիրները

Հայաստանի Հանրապետության իրավակարգում շրջակա միջավայրի կառավարման ապակենտրոնացումը ձևականորեն ամրագրված է ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենսդրական մակարդակներում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածը պետության վրա դնում է շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման պարտավորություն, իսկ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությունը համայնքներին վերապահում է մի շարք բնապահպանական լիազորություններ [13]:

Տեղական ինքնակառավարման մարմինների բնապահպանական լիազորությունների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ օրենսդրական մակարդակում համայնքային իշխանություններին վերապահված են ինչպես սեփական, այնպես էլ պետության պատվիրակած էական գործառույթներ [14]: Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածը համայնքի ղեկավարին վերապահում է պարտադիր լիազորություն՝ կազմակերպելու համայնքային հողերի, անտառային և ջրային ռեսուրսների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը, ինչպես նաև պետական պատվիրակմամբ իրականացնել վերահսկողություն բնության պահպանության ոլորտում և ապահովել բնական ռեսուրսների օգտագործման և պահպանության միջոցառումների իրականացումը: Միաժամանակ, նույն օրենքի 77[5] հոդվածը սահմանում է վարչական հսկողության հատուկ մեխանիզմ, ըստ որի՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, երբ առկա է ուղղակի վտանգ շրջակա միջավայրին, մարզպետը պարտավոր է միջամտել և իր միջոցներով վերացնել այդ վտանգը [14]:

Օրենսդիրը, մի կողմից՝ համայնքային մակարդակին վերապահում է շրջակա միջավայրի պահպանության գործառնական առաջնային դեր, սակայն, մյուս կողմից՝ պահպանում է կենտրոնացված միջամտության մեխանիզմներ, ինչը վկայում է ապակենտրոնացման ոչ լիարժեքության և տեղական մակարդակի ինստիտուցիոնալ ինքնավարության սահմանափակության մասին [15]:

Արդյունքում ձևավորվում է երկակի կառուցվածք, որտեղ տեղական ինքնակառավարման մարմինները հանդես են գալիս պոզիտիվ պարտավորությունների անմիջական իրականացնողներ, սակայն դրանց արդյունավետությունը կախված է կենտրոնական իշխանության վերահսկող և փոխարինող միջամտությունից, ինչը ևս մեկ անգամ հաստատում է ֆունկցիոնալ ապակենտրոնացման անհրաժեշտությունը շրջակա միջավայրի կառավարման ոլորտում:

Այնուամենայնիվ, իրավակիրառական պրակտիկայի և միջազգային գնահատականների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնապահպանական լիազորությունների իրականացումը կրում է սահմանափակ արդյունավետություն: Մասնավորապես, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (*Organisation for Economic Co-operation and Development – OECD*) և Եվրոպական միության համատեղ նախաձեռնության շրջանակում իրականացված գնահատականները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական համապատասխանության ապահովման համակարգը, հատկապես՝ տեղական մակարդակում, բնութագրվում է վերահսկողության թուլությամբ, ինստիտուցիոնալ կարողությունների սահմանափակությամբ և իրավակիրառման ցածր արդյունավետությամբ [15]:

Հատուկ ուշադրության է արժանի համայնքների խոշորացման գործընթացը, որը նպատակ ունի բարձրացնել տեղական կառավարման արդյունավետությունը՝ ռեսուրսների կենտրոնացման և կառավարման կարողությունների ընդլայնման միջոցով: Սակայն առկա տվյալների և գիտական գնահատականների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ բարեփոխումը չի հանգեցրել շրջակա միջավայրի կառավարման արդյունավետության էական աճի [2]:

Այս հանգամանքը վկայում է, որ համայնքների խոշորացումը, չնայած իր վարչատարածքային նպատակահարմարությանը, ինքնին բավարար պայման չէ բնապահպանական կառավարման արդյունավետության ապահովման համար, եթե այն չի ուղեկցվում համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների, մասնագիտական ներուժի և վերահսկողական մեխանիզմների զարգացմամբ:

Հետևաբար, համայնքների միավորման գործընթացը պետք է իրականացվի ոչ միայն վարչատարածքային օպտիմալացման տրամաբանությամբ, այլև զուգակցվի շրջակա միջավայրի պահպանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հստակեցմամբ և ուժեղացմամբ, ինչը հնարավորություն կտա ապահովել պետության պոզիտիվ պարտավորությունների առավել արդյունավետ և կանխարգելիչ իրականացումը տեղական մակարդակում:

Համեմատական փորձը ցույց է տալիս, որ ապակենտրոնացված բնապահպանական կառավարման արդյունավետությունը պայմանավորված է երեք հիմնարար տարրերի համակցությամբ, դրանք են՝ իրավական լիազորությունների հստակությունը, ֆինանսական ինքնուրույնությունը և հաշվետվողականության արդյունավետ մեխանիզմները: Դրանց բացակայության պայմաններում ապակենտրոնացումը կրում է ձևական բնույթ՝ հանգեցնելով կառավարման ֆրագմենտացիայի և շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետության նվազման:

Ապակենտրոնացված բնապահպանական կառավարման արդյունավետությունը պետք է դիտարկվի որպես ինստիտուցիոնալ հավասարակշռության արդյունք, որտեղ լիազորությունները, ռեսուրսները և պատասխանատվությունը գտնվում են համաչափ հարաբերության մեջ: Այս օրինաչափությունը կիրառելի է նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ ապակենտրոնացումը հաճախ չի ուղեկցվում համարժեք ինստիտուցիոնալ ապահովմամբ՝ առաջացնելով նորմատիվ և գործնական իրականացման խզում, ինչի հետևանքով արդյունավետությունը պետք է գնահատվի ոչ թե լիազորությունների ծավալով, այլ դրանց իրականացման գործառնական կարողություններով:

Եզրակացություն և առաջարկներ

Սույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ իրացումը չի կարող ապահովվել միայն նորմատիվ

կարգավորմամբ և պահանջում է բազմամակարդակ ինստիտուցիոնալ համակարգի ամբողջականությոան ապահովում, որի առանցքային օղակը պետք է կազմեն տեղական ինքնակառավարման մարմինները:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության իրավակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղական մարմիններին վերապահված բնապահպանական լիազորությունները, թեև ամրագրված են, սակայն գործնականում ապահովված չեն անհրաժեշտ ինստիտուցիոնալ, ֆինանսական և մասնագիտական ռեսուրսներով, ինչի հետևանքով հաճախ կրում են դեկլարատիվ բնույթ: Համայնքների խոշորացումը նույնպես չի ապահովել կառավարման արդյունավետության էական աճ, ինչը վկայում է, որ տարածքային վերակազմավորումը բավարար չէ առանց ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման:

Ընդհանուր առմամբ, ապակենտրոնացումը բախվում է կառուցվածքային խնդիրների՝ ռեսուրսների սահմանափակություն, վերահսկողության թերզարգացում և իրավական պաշտպանության անբավարար արդյունավետություն, որոնք խոչընդոտում են պետության պոզիտիվ պարտավորությունների լիարժեք իրականացումը: Այս համատեքստում անհրաժեշտ է անցում կատարել ձևական ապակենտրոնացումից դեպի ֆունկցիոնալ ապակենտրոնացում, որի շրջանակում լիազորությունների փոխանցումը պետք է ուղեկցվի դրանց իրականացման համար անհրաժեշտ իրավական, ինստիտուցիոնալ և ֆինանսական երաշխիքներով՝ ապահովելով շրջակա միջավայրի պաշտպանության կանխարգելիչ մոդելի կայացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է իրականացնել հետևյալ իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումները.

1. Օրենսդրորեն ամրագրել տեղական ինքնակառավարման մարմինների բնապահպանական պարտադիր լիազորությունների ամբողջական և հստակ ցանկը, սահմանելով դրանց իրականացման չափանիշները և պատասխանատվությունը չկատարելու դեպքում:
2. Ներդնել բնապահպանական մոնիթորինգի արդյունքների պարտադիր իրավական ուժի ինստիտուտը, ըստ որի՝ սահմանված մեթոդաբանությամբ իրականացված մոնիթորինգի տվյալները համարվեն «prima facie» ապացույց՝ ապացուցման բեռը տեղափոխելով վարչական մարմնի վրա:
3. Օրենսդրորեն ամրագրել հանրային մասնակցության արդյունքների պարտադիր ձևակերպում և մերժման դեպքում պատճառաբանված ակտ կազմելու պարտականությունը՝ պարտավորեցնելով վարչական մարմիններին յուրաքանչյուր էական դիտարկման վերաբերյալ տալ հիմնավորված և պատճառաբանված պատասխաններ:
4. Ամրագրել միջհամայնքային համագործակցության պարտադիր իրավական ձևաչափեր այն բնապահպանական խնդիրների համար, որոնք ունեն տարածքային գերազանցող ազդեցություն:

5. Սահմանել տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորման նպատակային մեխանիզմներ բնապահպանական գործառույթների իրականացման համար՝ ներառելով հատուկ ֆոնդերի կամ սուբվենցիոն ծրագրերի միջոցով:

6. Ապահովել համայնքներում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, որը կներառի մասնագիտական կարողությունների զարգացումը և տեխնիկական աջակցությունը:

Այսպիսով, հետազոտության արդյունքում հիմնական եզրահանգումն այն է, որ շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ իրացումը հնարավոր է միայն այնպիսի կառավարման մոդելի պայմաններում, որտեղ ապակենտրոնացումը չի սահմանափակվում լիազորությունների ձևական փոխանցմամբ, այլ վերածվում է պետության պոզիտիվ պարտավորությունների իրականացման գործառնական համակարգի՝ հիմնված տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ հզորացման և կանխարգելիչ իրավական մեխանիզմների վրա:

Գրականության ցանկ

1. Եվրոպական տեղական ինքնակառավարման խարտիա (European Charter of Local Self-Government), 1985:
2. Միլան-Գարսիա, Խուան և այլք (Milán-García, J. et al.), «Ապակենտրոնացումը և շրջակա միջավայրի կայունությունը» (Decentralization and Environmental Sustainability), Environmental Science & Policy, 2021:
3. Բոյդ, Դեյվիդ (Boyd, D.), «Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխություն» (The Environmental Rights Revolution), 2012:
4. Շելթոն, Դինա (Shelton, D.), «Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը» (Human Rights and the Environment), 2015:
5. Էքերսլեյ, Ռոբին (Eckersley, R.), «Կանաչ պետություն» (The Green State), 2004:
6. Լոպես Օստրա ընդդեմ Իսպանիայի (Lopez Ostra v. Spain), դիմում թիվ 16798/90, վճիռ՝ 9 դեկտեմբերի 1994 թ.
7. Ֆադեևա ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v. Russia), դիմում թիվ 55723/00, վճիռ՝ 9 հունիսի 2005 թ
8. Գուեռա և այլք ընդդեմ Իտալիայի (Guerra and Others v. Italy), դիմում թիվ 14967/89, վճիռ՝ 19 փետրվարի 1998 թ.
9. Հաթոն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and Others v. the United Kingdom), դիմում թիվ 36022/97, Մեծ պալատի վճիռ՝ 8 հուլիսի 2003 թ.
10. Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain), դիմում թիվ 4143/02, վճիռ՝ 16 նոյեմբերի 2004 թ.
11. Դուբեցկա և այլք ընդդեմ Ուկրաինայի (Dubetska and Others v. Ukraine), դիմում թիվ 30499/03, վճիռ՝ 10 փետրվարի 2011 թ.
12. Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի (Öneryildiz v. Turkey), դիմում թիվ 48939/99, Մեծ պալատի վճիռ՝ 30 նոյեմբերի 2004 թ.
13. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թ. փոփոխություններով):
14. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (2002 թ., փոփոխություններով):

15. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն և Եվրոպական միություն (Organisation for Economic Co-operation and Development – OECD / European Union), «Հայաստանում բնապահպանական համապատասխանության ապահովման համակարգը. ներկա իրավիճակ և առաջարկություններ» (Environmental Compliance Assurance System in Armenia: Current Situation and Recommendations), Փարիզ, 2022:

РЕАЛИЗАЦИЯ ПРАВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ НА УРОВНЕ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ

Туманян К.О.

Настоящая статья посвящена анализу институционально-правовых аспектов институционализации концепции права окружающей среды на уровне местного самоуправления. Особое внимание уделяется роли органов местного самоуправления в обеспечении экологически ориентированного управления и выполнении государственных обязательств в сфере охраны окружающей среды в контексте современных международно-правовых тенденций и развития экологических правовых доктрин.

В статье раскрывается существующее в Республике Армения противоречие между процессами децентрализации природоохранных полномочий и сохраняющейся централизацией финансовых, организационных и кадровых ресурсов, необходимых для их эффективного осуществления. Обосновывается, что подобный дисбаланс приводит к формированию институционального дефицита, ограничивающего возможности органов местного самоуправления по обеспечению экологических интересов населения, сохранению природных экосистем и достижению целей устойчивого развития.

В данном контексте предлагается переосмысление принципа субсидиарности как функциональной основы распределения экологических полномочий и реализации государственных обязательств в природоохранной сфере. Формулируется концепция «функциональной субсидиарности», предполагающая наличие необходимого ресурсного обеспечения и организационных возможностей для осуществления передаваемых полномочий. Рассматривается потенциал данного подхода для укрепления механизмов общественного участия в принятии экологически значимых решений, повышения эффективности местного экологического управления и формирования правовых гарантий институционализации концепции прав природы.

Ключевые слова: *концепция права окружающей среды, институционализация, принцип субсидиарности, функциональная субсидиарность, местное*

самоуправление, экологическое управление, децентрализация, Орхусская конвенция, общественное участие, устойчивое развитие.

IMPLEMENTATION OF THE CONCEPT OF RIGHTS OF NATURE AT THE LOCAL SELF-GOVERNMENT LEVEL

Tumanyan K.

This article is devoted to the analysis of the institutional and legal aspects of the institutionalization of the concept of the Rights of Nature at the local self-government level. Particular attention is paid to the role of local self-government bodies in ensuring environmentally oriented governance and fulfilling state obligations in the field of environmental protection in the context of contemporary international legal trends and the development of environmental legal doctrines.

The article identifies an existing contradiction in the Republic of Armenia between the processes of decentralization of environmental protection powers and the continued centralization of the financial, organizational, and human resources necessary for their effective implementation. It is argued that such an imbalance leads to the formation of an institutional deficit, limiting the capacity of local self-government bodies to protect the environmental interests of the population, preserve natural ecosystems, and achieve sustainable development goals.

In this context, the article proposes a reconsideration of the principle of subsidiarity as a functional basis for the distribution of environmental powers and the implementation of state obligations in the field of environmental protection. The concept of "functional subsidiarity" is formulated, implying the availability of the necessary resources and organizational capacities required to exercise delegated powers. The potential of this approach is examined in terms of strengthening mechanisms for public participation in environmentally significant decision-making, improving the effectiveness of local environmental governance, and establishing legal guarantees for the institutionalization of the concept of the Rights of Nature.

Keywords: *Rights of Nature concept, institutionalization, subsidiarity principle, functional subsidiarity, local self-government, environmental governance, decentralization, Aarhus Convention, public participation, sustainable development.*

Ներկայացվել է խմբագրության՝ 17.02.2026
Ընդունվել է տպագրության՝ 12.05.2026